ՍԱՄՈՒԽԱ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

Խեթական պետության հյուսիսարևելյան մասի կարևորագույն վարչական ու հոգևոր կենտրոնը Սամուխա[1] քաղաքն էր, որի մասին հիշատակություններ կան նախախեթական և խեթական ժամանակաշրջանից: Համաձայն «կապադովկյան աղյուսակների» (մ. թ. ա. XIX–XVIII դդ.)՝ քաղաքն ակտիվ կապեր է ունեցել տարածաշրջանի առևտրական կենտրոնների՝ Քանեսի (Նեսա), Լուխուզատտիյայի, Կարախնայի ու այլ քաղաքների հետ[2]: Սամուխայում կար ասորեստանյան վաճառականների կայան (wabartum). հանդիսացել է նաև բրդի ու անագի առևտրի կենտրոններից մեկը[3]:

Հետագայում Սամուխան բազմիցս հիշատակվել է նաև խեթական աղբյուրներում: Խեթական պետության ժամանակաշրջանում (մ. թ. ա. XVIII–XIII դդ.) քաղաքը ծաղկում է ապրում և՛ որպես վարչական, և՛ որպես հոգևոր կենտրոն:

Առաջին հիշատակություններից մեկը տրված է Խաթթիի արքա Տելեպինուի (մ. թ. ա. XV դ. II կես) տեքստում[4], որտեղ թվարկվել են մի քանի քաղաքներ՝ այդ թվում՝ Սամուխան: Կարևորագույն աղբյուրներից է համարվում նաև «Գետային նավարկություն» կոչվող տեքստը[5]: Այն իրենից ներկայացնում է մի նամակ՝ առաքված խեթական

---

[1] *Ըստ Գր. Ղափանցյանի՝ քաղաքի անունը կազմված է ասիանիկ sam(m)- «եղեգն» + -ha մասերից (հմմտ. հայ. շամբ), այսինքն՝ քաղաքի անունը կարելի է թարգմանել որպես Եղեգնուտ* (Гр. Капанцян. Хайаса-колыбель армян. Ереван, 1948, с. 62)*: Ս. Պետրոսյանը կարծում է, որ Սամուխա տեղանվան մեջ առկա է հինարիական բարբառներից մեկի «առյուծ» նշանակող բառը (*samha), որից էլ խեթական սեպագրագիտության մեջ վերարտադրվել է Šamuha ձևով (Ս. Պետրոսյան. Սամուխայի Մայր դիցուհու պաշտամունքի ակունքները.– ՊԲՀ, 2004, -1, էջ 170):*

[2] G. Barjamovic. A Historical Geography of Anatolia in the Old Assyrian Colony Period. Copenhagen, 2011, p. 136.

[3] A. W. Lassen. Wool Trade in Old Assyrian Anatolia, Jaarbericht Ex Oriente Lux, 2010, 42, pp. 159–179; G. Barjamovic. *Նշվ. աշխ., էջ 15,* A. Bobokhyan. Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500–1500 v. Chr., Band 1, British Archaeological Reports International Series 1853, 2008, S. 69.

[4] Keilschrifttexte aus Boğhazköi (*այսուհետև՝* KBo) III 1 21 (I. Hoffmann. Der ErlaB Telepinus, Heidelberg, 1984, S. 40–41).

[5] Keilschrifturkanden aus Boğhazköi (*այսուհետև՝* KUB) XXXI 79 (E. Laroche. Catalogue des textes Hittites, Paris, 1971 (*այսուհետև՝* CTH), 214.17. *Տե՛ս նաև* J. Garstang, O. R. Gurney. The Geography of the Hittite Empire, London, 1959, pp. 33–36; F. Cornelius. Geographie des Hethiterreiches, Orientalia, 1958, 27, S. 373–374; R. Lebrun. Samuha foyer religieux de l'empire Hittite,

արքային ինչ-որ պաշտոնյայից: Տեքստը, հավանաբար, խեթական Նոր թագավորության ժամանակաշրջանին (մ. թ. ա. XIV–XIII դդ.) է վերաբերում: Համաձայն այդ սկզբնաղբյուրի՝ Պիտտիյարիգայից[6] նավակներով (կամ լաստերով) մինչև Սամուխա ապրանքներ էին առաքում: Որպես միջանկյալ քաղաք նշվում է Արծիյան[7]:

Սամուխան նաև Խաթթիի ժամանակավոր մայրաքաղաքն էր Թուդխալիյա III-ի կառավարման ժամանակաշրջանում (մ. թ. ա. մոտ 1360–1344 թթ.), երբ Խաթթիի տարածքի զգալի մասը (նաև նրա մայրաքաղաք Խաթթուսան) կա՛մ գրավվել էր, կա՛մ դուրս էր եկել Խաթթիի արքայի վերահսկողությունից, և նա ստիպված էր իր արքունիքով տեղափոխվել այդտեղ[8]: Հավանաբար, մինչ այդ Ազզին (Հայասան), ըստ խեթական աղբյուրների, հարձակվել և գրավվել էր «բոլոր Վերին երկրները և Սամուխան սահման դարձրել»[9]: Պարզ չէ՝ արդյոք ազզեցիները գրավել էին քաղաքը, թե պարզապես այն մոտ էր նրանց գրաված տարածքներին. փաստն այն է, որ այդ ժամանակաշրջանում Հայասայի (Ազզիի) հյուսիսարևմտյան սահմանը հասնում էր մինչև Հայկական լեռնաշխարհի ամենաարևմտյան շրջանները՝ Հալիս գետի վերին ավազանը: Սակայն կարճ ժամանակ անց կա՛մ խեթերն ետ են վերցրել Սամուխան, կա՛մ՝ ազզեցիները. վերցնելով ավարը՝ նահանջել են՝ հեռանալով Վերին երկրի տարածքից: Համենայն դեպս, քաղաքը Թուդխալիյա III-ի և արքայազն Սուպպիլուլիումայի համար շուտով դառնում է այն հենակետը, որտեղից նրանք սկսում են Խաթթիի հզորության և տարածքային ամբողջականության վերականգնման գործընթացը[10]: Հիշատակվել է նաև Թուդխալիյա III-ին հաջորդած Սուպպիլուլիումա I-ի (մ. թ. ա. 1344–1322 թթ.) «տարեգրություններում»[11], ինչպես է նաև՝ Մուրսիլի II-ի (մ. թ. ա. 1321–1295 թթ.) «Տասնամյա» տարեգրության հինգերորդ տարում[12]:

Louvain-la-Neuve, 1976, pp. 217–218; *Ա. Քոսյան. Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական աղբյուրների) (այսուհետև՝ ՀԼՏ), Երևան, 2004, էջ 118–119):*

[6] *Պիտտիյարիգայի մասին տե՛ս ՀԼՏ, էջ 80–81:*

[7] Arziya- *բառը խեթերենում նշանակում է շտեմարան, մթերանոց, հացահատիկի պահեստ (տե՛ս* J. Tischler. Hethitisches Handwörterbuch. Innsbruck, 2001, S. 25*): Սա կարող է նշանակել, որ քաղաքը բնակեցված է եղել նեսիախոս բնակչությամբ դեռևս հնագույն ժամանակաշրջանից և հանդիսացել է կարևոր առևտրական կենտրոններից մեկը տարածաշրջանում:*

[8] T. Bryce. The Kingdom of Hittites. Oxford, 2005, pp. 148–153.

[9] KBo VI 28, 6–15 (CTH 88).

[10] H. Güterbock. The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II.– Journal of Cuneiform Studies, 1956, 2, pp. 63–67; T. Bryce. *Նշվ. աշխ., էջ 147–148:*

[11] H. Güterbock. ***Նշվ. աշխ., էջ 63–64:***

[12] KBo III 4 III 48. *Քաղաքն այստեղ տրվել է Սամախա ձևով. տե՛ս* G. Del Monte, T. Tischler. Répertoire Géographique des Textes Cunéiformes, № VI (*այսուհետև՝* RGTC, VI), VI, S. 337–341; VI/2, S. 136; *ՀԼՏ, էջ 85–90: Քաղաքը հիշատակվել է նաև Սապուխա ձևով [տե՛ս, օրինակ, «Դաշտերի Իշտարին» նվիրված տեքստում* (KUB XXX 56: *ՀԼՏ, էջ 141)]:*

Սամուխան կարևոր դեր է խաղացել նաև Մուրսիլի III-ի (Ուրխի-Թեշուբ) (մ. թ. ա. 1272–1267 թթ.) և նրա հորեղբայր Խաթթուսիլիի միջև տեղի ունեցած գահակալական պայքարի ընթացքում: Համաձայն Խաթթուսիլիի «ինքնակենսագրական» տեքստի՝ Իշտար աստվածուհին Մուրսիլի II-ից պահանջում է, որ նա իր կրտսեր որդուն՝ Խաթթուսիլիին տա ծառայության իրեն՝ որպես քուրմ: Խաթթիի արքան այդպես էլ անում է: Ըստ տեքստի՝ դեռևս Մուվատտալի II-ի օրոք (մ. թ. ա. 1295–1272 թթ.) Խաթթուսիլիին ցանկանում էր վնաս հասցնել նրա հակառակորդ Ցիդայի որդի Արմա-Թարխունտան, ով «Իշտար աստվածուհու քաղաք Սամուխան լցրել էր կախարդանքներով»[13]: Մուվատտալիի հաջորդ Մուրսիլի III-ն Արմա-Թարխունտայի որդուն՝ Միպպացիտիին, ուղարկում է Վերին երկիր՝ հավանաբար խոստանալով նրան նշանակել տեղի կառավարիչ: Այս ամենը, անշուշտ, ուղղված էր Խաթթուսիլիի դեմ, ով իր եղբոր օրոք նշանակվել էր Վերին երկրի և հարակից տարածքների կառավարիչ-փոխարքա: Խաթթուսիլին նշում է, որ Մուրսիլի III-ն իրենից խլել էր նաև Սամուխան[14]: Այս ամենը հանգեցնում է պատերազմի Խաթթուսիլիի ու Մուրսիլի III-ի միջև, որը հիմնականում ընթանում էր Վերին երկրի տարածքում: Պատերազմի ընթացքում Մուրսիլի III-ը Մարասանտիյա քաղաքից հեռանում և ապաստանում է այդտեղ, որը մեկ անգամ ևս - ժամանակավորապես դառնում է Խաթթիի արքայի նստավայրը: Խաթթուսիլին պաշարում (Խաթթուսիլիի պատկերավոր արտահայտությամբ, նա Մուրսիլի III-ին փակել էր Սամուխայում, ինչպես «խոզին իր փարախում»)[15], այնուհետև գրավում է քաղաքը և գահընկեց անում իր զարմիկին: Անհասկանալի է, թե ինչու էր Մուրսիլի III-ն այդ քաղաքն ընտրել որպես ապաստարան: Միգուցե նա ցանկանում էր ապաստան գտնել իր հակառակորդի կողմից պաշտվող աստվածուհու պաշտամունքի կենտրոնում կամ օգնություն ստանալ կասկերից: Համենայն դեպս, հաղթանակած Խաթթուսիլին հռչակվում է Խաթթիի մեծ արքա (մ. թ. ա. 1267–1237 թթ.) և իր բոլոր հաղթանակները բացատրում Սամուխայի Իշտար աստվածուհու՝ իր տիրուհու օժանդակությամբ:

Մեզ է հասել Խաթթուսիլի III-ի որդի արքայազն Թուդխալիյայի [ապագա արքա Թուդխալիյա IV (մ. թ. ա. 1237–1209 թթ.)] նամակը[16], որտեղ նա շարադրում է ռազմական գործողությունները Վերին երկրում (հակառակորդի անվանումը պարունակող հատվածը վնասված է): Այնուհետև ասվում է, որ «նա (հավանաբար, թշնամին – Ռ. Ղ.*) մոտեցել է Սամուխա քաղաքին»: Հավանական է, որ թշնամիներ են եղել կա՛մ կասկե-*

---

[13] H. O t t e n. Die Apologie Hattusilis III. Das Bild der Ьberlieferung. Wiesbaden, 1981, S. 6–7, 16–17.

[14] *Սա խոսում է այն մասին, որ քաղաքը կարևոր է եղել Խաթթուսիլիի համար, հավանաբար, այն պատճառով, որ այստեղ էր Իշտարի պաշտամունքի կենտրոնը:*

[15] *Տե՛ս* H. O t t e n. *Նշվ. աշխ., էջ 24–25:*

[16] KUB XIX 23 (CTH 192). *Տե՛ս նաև ՀԼՏ, էջ 137:*

որը, կա՛մ հայասացիները: Դեպքերը տեղի են ունեցել Խաթթուսիլի III-ի օրոք, սակայն պարզ չէ, թե նրա կառավարման որ ժամանակաշրջանում:

Խեթական տերության անկումից հետո (մ. թ. ա. XIII դ. վերջ – XII դ. սկիզբ) Սամուխայի մասին հիշատակությունները դադարում են:

Անդրադառնանք քաղաքի տեղադրության հարցերին: Ինչպես վերը նշվեց, խեթական KUB XXXI 79 տեքստում նկարագրվում է ապրանքների տեղափոխումը գետով, որով նավարկություն էր իրականացվում Պիտտիյարիգա, Արծիյա և Սամուխա քաղաքների միջև: Այս տեքստը պատկերացում է տալիս, որ վերջինս գտնվել է գետի ափին. որոշ հատվածներում ծանծաղ էր, և նավակները կարող էին շրջվել: Այդտեղից ապրանքները տեղափոխվում էին ավելի մեծ նավի վրա: Տեքստի վնասվածության պատճառով անհասկանալի է, թե այնուհետև այդ ապրանքները ուր պետք է տարվեին[17]: Պիտտիյարիգայից Սամուխա գետային ճանապարհի առկայությունը կարևորագույն նշանակություն ունի ինչպես վերոհիշյալ երեք քաղաքների՝ միևնույն գետի ափին գտնվելու տեսանկյունից, այնպես էլ կարող է հնարավորություն ընձեռել՝ ճշգրտելու այդ քաղաքների հետ այլ տեքստերում նշված շատ այլ բնակավայրերի մոտավոր տեղադրությունը: Երկար ժամանակ տեքստում հիշատակված նավարկելի գետը նույնացվում էր Եփրատի հետ, և վերոնշյալ քաղաքները որոնում էին Եփրատի վերին հոսանքներից մինչև Մալաթիա ընկած հատվածում:

Հ. Մանանդյանը Սամուխան տեղադրում է Արևմտյան Եփրատի մեծ գալարից հյուսիս, երբ գետը, փոխելով իր արևմտյան ընթացքը, շրջվում է դեպի հարավ-արևելք, և այն նույնացնում է ուշ ժամանակների Չեմուխա բնակավայրի հետ, որը գտնվում էր Կամախից մոտ 50 կմ արևմուտք[18]: Ա. Գյոթցեն քաղաքը տեղորոշում է Վերին Եփրատի ավազանում[19]: Իսկ Ս. Ալփը այն տեղադրում է Իսուվայից հյուսիս՝ Արածանիի՝ Արևմտյան Եփրատի հետ միախառնվելու հատվածի մոտ[20]: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Վերին երկրները ընկած էին Ազզիի և Սամուխայի միջև: Նա չի ընդունում, որ վերջինս Վերին երկրի կենտրոնն էր: Ըստ նրա՝ այն գտնվում էր բուն Խաթթիի և Վերին երկրի

---

[17] R. Lebrun. *Նշվ. աշխ., էջ 217–218,* O. R. Gurney. The Upper Land, mātum elūtum, in G. Beckman et al (eds.) Hittite Studies in Honour of Harry A. Hoffner Jr. on the Occasion of his 65th Birthday, Winona Lake, 2003, pp. 123–124. KBo IV 13 *տեքստում նույնպես տրված են Պիտտիյարիգա, Արծիյա, Սամուխա ու այլ բնակավայրեր. դա խոսում է այն մասին, որ իսկապես այդ քաղաքները մոտ են գտնվել իրար և սերտ կապեր են ունեցել դեռ վաղ ժամանակներից:*

[18] Я. Манандян. О некоторых спорных проблемах истории и географии древней Армении. Ереван, 1956, с. 77, 116. *Այս տեղադրության հետ համամիտ է նաև Ս. Պետրոսյանը (տե՛ս Ս. Պետրոսյան. նշվ. հոդվ., էջ 161):*

[19] A. Goetze. Kleinasien. München, 1957, S. 72, 74–75.

[20] S. Alp. Die Lage von Šamuha. Anatolia, I, 1956, S. 77–80.

սահմանագլխին, Եփրատի ոլորանի մոտ[21], Չեմուխա բնակավայրի տեղում[22]: Ըստ Ա. Քոսյանի՝ քաղաքը կարելի է տեղորոշել Եփրատի կեռմանից հարավ՝ արևմուտքից գետին հարող շրջանում[23]:

Ինչպես տեսնում ենք, Սամուխայի ավանդական տեղադրումը Վերին Եփրատի ավազանում համոզիչ չի թվում և վիճարկվում է: Պատճառն այն է, որ խեթական աղբյուրներում հստակ տրված չէ, թե որ գետի ափին էր գտնվում քաղաքը:

«Կապադովկյան աղյուսակներն» այս խնդրի լուծումը չեն տալիս, սակայն դատելով այդ աղբյուրներից՝ ակնհայտ է, որ քաղաքը գտնվել է Կարախնա և Խուրամա քաղաքների մոտ[24]: Իսկ խեթական KUB XXV 32+ տեքստում նկարագրվում է, որ Կարախնա քաղաքի ծիսական արարողությունները տեղի են ունենում նաև Սամուխայում, որը խոսուն փաստ է. այդ քաղաքները մոտ են գտնվել իրար և Հալիս գետի ավազանից արևելք չեն եղել, քանի որ իր հերթին Կարախնան մոտ էր Տապիկկային, որը տեղորոշվում է ներկայիս Մաշատ-հյոյուք հնավայրի տեղում [մոտ 20 կմ Զիլե (Զելա) քաղաքից հարավ]: Կարևոր է նաև Խաթթուսիլի III-ի տեքստը, որտեղ ասվում է, որ իր և Մուրսիլի III-ի միջև ընթացող պատերազմի ժամանակ վերջինս Մարասանտիյա քաղաքից [նույնանուն գետի (Մարասանտիյա=Հալիս) ափին] հեռանում և ապաստանում է Սամուխայում[25]:

KBo I 58 (II 4΄–5΄) տեքստի մի հատվածում քաղաքը նշվել է անմիջապես Սարիսսայից հետո (որը տեղորոշվում է Սեբաստիայի մոտ գտնվող Քուշաքլը հնավայրի տեղում, Փոքր Հայքի տարածքում): Ավելին, խեթական միջազգային պայմանագրերում, երբ աստվածներին որպես վկա էին բերում, այդտեղի Ամպրոպի աստվածը սովորաբար տրվում էր անմիջապես Սարիսսայի Ամպրոպի աստծուց հետո: Գոյություն ունի նաև բնակավայրերի ցուցակ ներկայացնող տեքստի բեկոր (բնույթը պարզ չէ), որտեղ Սամուխան ընդգրկող հատվածն այսպիսին է՝ Նենիսանկուվա, Ադունուվա, Ապցիսնա, Սարիսսա և Սամուխա[26]:

Ժամանակակից հնագիտական աշխատություններում քաղաքը սովորաբար տեղորոշվում է Սեբաստիայի նահանգում՝ Քայալըփընար (տեղանունը կարելի է թարգմանել՝ «ժայռոտ աղբյուր») բնակավայրի մոտ գտնվող հնավայրի [Harabe Tepesi՝ «ավերակ բլուր», կոչվում է նաև «ավերակ վայր» (Harabe Mevkii)] տեղում: Ա. Մյուլլեր-Կար-

---

[21] В. Хачатрян. Восточные провинции Хеттской империи (вопросы топонимики). Ереван, 1971, с. 59, 62–67.

[22] *Վ. Խաչատրյան. Հայաստանը մ. թ. ա. XV–VII դարերում (Հայոց հին պատմություն), Երևան, 1998, էջ 54:*

[23] *ՀԼՏ, էջ 119:*

[24] G. Barjavovic. *Նշվ. աշխ., էջ 151–154:*

[25] KBo VI 29 II 18–20.

[26] *ՀԼՏ, էջ 123:*

պեն առաջինն առաջարկեց Սամուխան տեղադրել այս հնավայրի տեղում[27], որը գտնվում է Հալիս գետի ափին՝ Քուշաքլը հնավայրից (Սարիսսա) ոչ հեռու[28]: Քայալը-փընարի հնավայրը[29] մոտ 20 հեկտար է զբաղեցնում, Հալիս գետի հյուսիսային ափին՝ Սեբաստիայից մոտ 45 կմ հարավ-արևմուտք[30]:

Հնավայրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են միջին և ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանով թվագրվող գտածոներ: Վաղխեթական ժամանակաշրջանով (մ. թ. ա. XVIII–XVI դդ.) թվագրվող շերտում հայտնաբերվել են ավերման հետքեր: Որոշ ժամանակ անց վայրը նորից բնակեցվել է և շրջապատվել ավելի ամուր ու լայն պարիսպներով: Սա խոսում է այն մասին, որ Սամուխան կարևոր դիրք է զբաղեցրել Խաթթիին հյուսիս-արևելքից և հյուսիսից եկող վտանգներին դիմագրավելու ճանապարհին, ու խեթերն այն ամրացրել են: Բնականաբար ավերվել է նաև նորխեթական ժամանակաշրջանում: Կարելի է կարծել՝ այն հետևանք է հայասացիների ներխուժման, որն արձանագրվել է KBo VI 28 տեքստում, որտեղ տրված է՝ նրանք արշավել էին դեպի Վերին երկիր, և քաղաքը դարձրել իրենց սահմանը: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են նաև մի մեծ շինության հետքեր, որն ավերվել և վերականգնվել է մի քանի անգամ: Հավանաբար, այն հանդիսացել է պալատ[31] կամ տաճար:

Հնավայրից գտնվել են արձանագրություններ[32], որոնք ունեն հիմնականում ծիսական բնույթ: Կան նաև բավականին վնասված կավե սեպագիր աղյուսակ (Kp 05/226): Խուրիերեն այդ տեքստում խոսք է գնում Կիցցուվատնայի (Կիլիկիայի արևելքում) և Ալալախի (Սիրիայի հյուսիս-արևմուտքում) տարածքում ռազմական գործողությունների մասին[33]: Գտնվել է հոգևոր բնույթի խեթական մի տեքստ[34]: Այն ներկայացնում է

---

[27] A. Müller-Karpe. Kayalıpınar in Ostkappadokien. Ein neuer hethitischer Tontafelfundplatz, Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft (*այսուհետև* MDOG), 132, 2000, S. 355–365.

[28] *Տե՛ս նաև* S. De Martino. Šamuha, Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archдologie, band 12, 1/2, 2009, pp. 1–2.

[29] *Հնավայրը սխալմամբ տեղորոշվել է արևելյան Կապադովկիայում, այն-ինչ այն Փոքր Հայքի տարածքում է՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում: Հայկական լեռնաշխարհի արևմտյան սահմանների մասին տե՛ս* Л. Н. Зограбян. Орография Армянского нагорья (опыт орографического анализа морфоструктуры). Ереван, 1979, с. 14.

[30] *Տե՛ս նաև* J. Yakar, A. Gürsan-Salzmann. Archaeological Survey in the Malatya and Sivas Provinces – 1977, Tel Aviv, 6, 1979, p. 39ff; A. T. Öksе. Sivas Ili 1992 yüzey araştırması. XI. Araştırma Sonuçları Toplantısı, Ankara 24–28 Mayıs 1993, 1994, s. 244; A. T. Öksе. Sivas Ili 1997 yüzey araştırması. XI. Araştırma Sonuçları Toplantısı, Tarsus 25–29 Mayıs 1998, 1999, s. 472.

[31] *Սամուխայում գտնվող պալատի մասին է վկայում նաև խեթական* KBo XLV 179 *տեքստը: Հրահանգի տեսքով կազմված տեքստում թվարկվում են «Իսուվայի արքայի ծառաները», «Սապուխայի (=Սամուխայի) պալատի մարդիկ», Վատարուսնա քաղաքը և այլն (տե՛ս ՀԼՏ, էջ 132):*

[32] A. Müller-Karpe et al. Untersuchungen in Kayalıpınar 2005.– MDOG, 138, 2006, S. 227–231.

[33] *Անհայտ է, թե ով է զեկուցողը: Տրված է, որ ռազմական գործողությունները վարում էին Էխլի-Տենուն և Իլի-Շառուման, ովքեր ոչ մի այլ տեղ չեն հիշատակվել: Նրանք լեռներով ճանապարհ են*

արարողություն, որը կապված է Իշտարի՝ «աստվածային տիրուհու» պաշտամունքի հետ: Տեղը, որտեղ անցկացվում էր արարողությունը, եղել է Իշտարի պաշտամունքի կենտրոններից մեկը: Այն կարևոր վայր էր, քանի որ արարողությանը մասնակից էր նաև արքան[35]*: Խաթթիում Իշտար աստվածուհու գլխավոր պաշտամունքի վայրը Սամուխան էր, որը, ինչպես և հնավայրը, գտնվում էր գետի ափին*[36]*: Ծիսական բնույթի տեքստը թվագրվում է միջինխեթական ժամանակաշրջանով և լրացուցիչ հիմք է այն Քայալըփընարի տեղում տեղադրելու համար:*

Հնավայրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են կավե դրոշմակնիքներ (դրանք բաժանվում են 3 խմբի՝ կնիքներ լուվիական հիերոգլիֆիկ գրով, խեթական սեպագրով և երկգիր)[37]*, կրաքարե մի քարակտոր (1,2 մ բարձրությամբ և 95 սմ լայնքով. դրա վրա կա ռելիեֆային պատկեր՝ գահին նստած կնոջ կերպարով)*[38]*, բազմաթիվ գերեզմաններ, թաղումներ՝ թվագրվող Նոր խեթական թագավորության ժամանակաշրջանով*[39]*:*

Սամուխան Խաթթիի հոգևոր կարևորագույն կենտրոններից էր, որտեղ բացի Իշտարից երկրպագել են նաև այլ աստվածների՝ ^{D}Ab/para *– Աբ/պարային,* ^{D}Hebat *– Խեբատին,* ^{D}*BELLAT AYAKKI – ayakki-ի տիրուհուն,* DINGIR.*GE*$_{6}$ *– Սև աստվածուհուն*[40]*,*

ընկել դեպի ծով: Իրադարձությունները որևէ այլ տեղ չեն նկարագրվել, և կարելի է դրանք թվագրել Թուդխալիյա I-ի ժամանակաշրջանով (մ. թ. ա. XV դ.): Նա նույնպես արշավել է դեպի Հալեպ, և այդ դեպքերը վերաբերել են նաև Ալալախին (տե՛ս G. Wilhelm. Die hurritischprachige Tafel Kp 05/226, In Müller-Karpe A. et al. Untersuchungen in Kayalıpınar 2005, MDOG, 138, 2006, S. 233–236).

[34] A. Müller-Karpe. Kayalıpınar in Ostkappadokien Ein neuer hethitischer Tontafelfundplatz, MDOG, 132, 2000, S. 361.

[35] *Տե՛ս ՀԼՏ, էջ 149:*

[36] A. Müller-Karpe. *Նշվ. աշխ., էջ 355–365:*

[37] S. Herbordt, M. Alkan. Ein scheibenförmiges Hieroglyphensiegel im Sivas Museum, Archivum anatolicum, 2000, 4, S. 89–98; A. Müller-Karpe. Kayalıpınar in Ostkappadokien Ein neuer hethitischer Tontafelfundplatz, S. 355–365.

[38] A. Müller-Karpe. Recent Research on Hittite Archaeology in the “Upper Land”, Central-North Anatolia in the Hittite Period. New perspectives in light of recent research. Acts of the international conference held at the University of Florence (7–9 February 2007). Roma, 2009, pp. 112–114.

[39] M. Zeiler. Die Bestattungen auf dem Südosthügel von Kayalıpınar, In A. Müller-Karpe et al., Untersuchungen in Kayalıpınar 2005, MDOG, 138, 2006, S. 236–245.

[40] *Սամուխայի հայտնի աստվածություններից մեկն էր նաև Սև աստվածուհին, որի պաշտամունքը ներկրվել էր Կիցցուվատնայից Թուդխալիյա I/II-ի օրոք* (KUB XXIX 4): *Այս տեքստը կարելի է համեմատել* KUB XXXII 133 *տեքստի հետ, որտեղ Մուրսիլի II-ը նշում է, որ իր նախնի Թուդխալիյան Կիցցուվատնայի տաճարի «Սև աստվածությունը» տեղափոխել էր Սամուխա (տե՛ս* J. Miller. Studies in the Origins, Development and Interpretation of the Kizzuwatna Rituals (StBot 46),

^{D}U - *Ամպրոպի աստծուն,* ^{D}Hebat mušni – *Խեբատ «արդարին»,* ^{D}Huwariyanzipa – *Խուվարիյանցիպային,* DINGIR^{MEŠ} ^{URU}Šamuha – *Սամուխայի աստվածներին,* DINGIR.LÚ^{MEŠ} DINGIR.MUNUS^{MEŠ} – *արական (և) իգական աստվածներին,* HUR.SAG^{MEŠ} ÍD^{MEŠ} – *լեռներին (և) գետերին,* ^{D}*IŠTAR ŞĒRI,* ^{D}*IŠTAR LÍL,* ^{D}*LIŠ LÍL, «ազատ դաշտերի տիրուհուն», Արևի աստվածուհուն, Սամուխայի Արևի աստծուն: Քաղաքի աստվածները բազմիցս հիշատակվել են խեթական տարբեր պայմանագրերում՝ որպես պայմանագրերին վկա աստվածություններ*[41]*: Նշենք որ Իշտարն արքայական ընտանիքի շատ անդամների հովանավոր աստվածուհին էր: Այսպես, արդեն ասվեց, որ Խաթթուսիլի III-ը մանուկ հասակում տրվել էր ծառայության Իշտար աստվածուհուն: Նա ևս իր որդուն՝ Թուդխալիյային նվիրում է ծառայության նույն աստվածուհուն*[42]*:*

Գոյություն ունեն նաև խեթական արքաների աղոթքի տեքստեր, աստվածների ցուցակներ, որտեղ նույնպես հիշատակվել են Սամուխան ու նրա աստվածները[43]*:*

Թագավորական ընտանիքի անդամները հաճախ կանգ էին առնում այդտեղ: KBo IV 6 տեքստից տեղեկանում ենք, որ Գասսուլիյավիյան՝ Մուրսիլի II-ի կինը, այստեղ մնալու ժամանակ երազում տեսել է Լելվանի աստվածուհուն[44]*: Խաթթուսիլի III-ի կինը՝ Պուդուխեպան, նույնպես երազ է տեսել Սամուխայում*[45]*:*

Խեթական վերջին տիրակալների (Առնուվանդա III, Սուպպիլուլիումա II) ժամանակաշրջանի տեքստերում չկան քաղաքի վերաբերյալ հիշատակություններ: Հավանական է, որ այն ավերվել է կասկերի կողմից Խեթական տերության անկման ժամանակ (մ. թ. ա. XII դ. սկիզբ), քանի որ ավելի ուշ ժամանակաշրջանում տեսնում ենք կասկերի հիշատակությունը Վերին երկրից հարավ ընկած տարածքներում՝ Մելիդ (հետագայի Մալաթիայի շրջան) և Թաբալ (հետագայի Կապադովկիայի տարածքը) երկրների մոտ:

Ամփոփելով, կարելի է արձանագրել, որ Սամուխան Խեթական պետության հյուսիսարևելյան մասի կարևորագույն վարչական և հոգևոր կենտրոնն էր: Նրա մասին հիշատակություններ առկա են նախախեթական և խեթական ժամանակաշրջանից: Խեթական պետության ժամանակաշրջանում քաղաքը ծաղկում է ապրում և՛ որպես վարչական, և՛ որպես հոգևոր կենտրոն: Այն Իշտար աստվածուհու պաշտամունքի

2004, pp. 312–319)*: Հավանաբար, Սև աստվածությունը նույնական էր Իշտարին, այդ պատճառով էլ այն Կիցցուվատնայից տեղափոխվում էր Սամուխա:*

[41] G. B e c k m a n. Hittite Diplomatic Texts. Atlanta, 1996, pp. 63, 77, 80, 81; *ՀԼՏ, էջ 122–124, 137, 139:*

[42] F. I m p a r a t i. Apology of Hattusili III or Designation of His Successor, Festschrift. Ph. H. J. Houwink ten Cate, 1995, pp. 143–157.

[43] *Տե՛ս* J. G a r s t a n g, O. R. G u r n e y. The Geography of the Hittite Empire. London, 1959, p. 7; *ՀԼՏ, էջ 113–114:*

[44] I. S i n g e r. Hittite Prayers. Leiden-Boston-Köln, 2002, pp. 71–73.

[45] KUB XV 30 III 8–9; *ՀԼՏ, էջ 135:*

գլխավոր կենտրոնն էր Խաթթիում. ժամանակավորապես եղել է վերջինիս մայրաքաղաքը: Թագավորական ընտանիքի անդամները հաճախ կանգ էին առնում Սամուխայում: Խեթական տերության անկումից հետո (մ. թ. ա. XIII դ. վերջ – XII դ. սկիզբ) քաղաքի մասին հիշատակությունները դադարում են:

Սամուխան գտնվել է Հալիս գետի ափին և տեղորոշվում է Սեբաստիայի նահանգում՝ Քայալրփիրնար բնակավայրի մոտ պեղված հնավայրի տեղում, իսկ աշխարհագրական առումով էլ վերջինս տեղադրվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում:

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ИСТОРИИ ГОРОДА САМУХА

РОБЕРТ КАЗАРЯН

Резюме

Город Самуха являлся важнейшим административным, торговым и духовным центром северо-восточой части Хеттской державы. Он упоминается со времен ашшурских торговых центров в Малой Азии. Самуха являлась также центром почитания богини Иштар. Кроме того, она была временной политической столицей Хеттского государства. После падения Хеттской державы город больше не упоминался в источниках. Самуха находилась на берегу реки Галис, на западных окраинах Армянского нагорья, вероятно, на месте археологического памятника Кайалипинар.

ON SOME ISSUES OF THE HISTORY OF THE TOWN OF SAMUHA

ROBERT GHAZARYAN

Summary

The town of Samuha was the most important administrative, commercial and spiritual center of North-Eastern part of the Hittite Empire. The town has been mentioned since the time of Assyrian Trade Colonies in Asia Minor. It was the center of worship of the goddess Ishtar. Samuha was also the temporary political center of the Hittite Empire. After the fall of the Hittite Empire the town was no longer mentioned in the sources. Samuha was on the bank of the river Halys, on western parts of the Armenian Highland. Most likely it was on the place of the archaeological site Kayalipinar.